**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր**
**Ստեղծողի մոբիլ դպրոց**
**2017-2018 ուսումնական տարի**
**4-5-րդ դասարաններ**
**Ուսումնական պլան**

| Բովանդակություն | Շաբաթական ժամաքանակը | |
|---|---|---|
| | IV | V |
| **Ընդհանուր բաղկացուցիչ** | | |
| Մայրենի | 5 | 5 |
| Անգլերեն | 2 | 2 |
| Ռուսերեն | 2 | 2 |
| Մաթեմատիկա | 4 | 4 |
| Բնագիտություն | 2 | 2 |
| Հայրենագիտություն | 2 | 2 |
| Երաժշտություն, պար | 2 | 2 |
| Տեխնոլոգիա | 2 | 2 |
| Ֆիզկուլտուրա | 3 | 3 |
| **Սովորողի ընտրությամբ բաղկացուցիչ** | | |
| Սովորողի ընտրած գործունեություն | 4 | 4 |
| Ընդամենը | 28 | 28 |
| Տնային ուսումնական աշխատանք | | |
| Լրացուցիչ կրթություն | | |

**Ուսումնական պլանի պարզաբանումներ**

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական պլանի ընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:

4-5-րդ դասարանի սովորողների հետ կազմվում է անհատական պլան:
Ուսումնական պլանները տեղադրված են Հարավային դպրոցի Sky-drive–ում:

2. Կրթահամալիրի դպրոց ընդունվում է այն սովորողը, որի ծնողն (օրինական ներկայացուցիչը) ընտրում է Ծրագիրը և սահմանված կարգով պայմանագիր կնքում ուսումնառության մասին: Ընդունելությունը կատարվում է «Մուտք կրթահամալիր» ուսումնական ճամբարով:

Այս ուսունական տարում Հարավային դպրոցի 4-5-րդ դասարաններ ընդունվել են 5 սովորող՝ բոլորն էլ «Մուտք կրթահամալիր» ուսումնական ճամբարով

3. Դասարանում սովորողների թիվը 20-25 է: Սովորողի ընտրությամբ գործունեությունը կազմակերպվում է 12-15 հոգիանոց խմբերով:

4. Դասարանները, ընտրությամբ գործունեության խմբերը կամվել են այս կետի համաձայն: Բացառությամբ 5 –րդ դասարանի, որտեղ կա 27 սովորող

5. Ուսումնական պլանը կազմված է ընդհանուր, սովորողի ընտրությամբ բաղկացուցիչներից:
6. Սովորողի ուսումնական գործունեությունը կազմակերպվում է անհատական ուսումնական պլանով, որը սահմանված կարգով կազմվում է ուսումնական չորս շրջանների համար, այս ուսումնական պլանի հիման վրա:

4-5-րդ դասարանի սովորողների հետ կազմվում է անհատական պլան: Ուսումնական պլանները տեղադրված են Հարավային դպրոցի Sky-drive–ում: Յուրաքանչյուր շրջանի համարկամվում է նոր ուսումնական պլան:

7. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանք դպրոցի դեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
8. Ուսուցումը կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, ակումբի, սովորողի ընտրությամբ գործունեության, լրացուցիչ կրթության, ուսումնական նախագծերի) ուսումնական օրացույցով: Դրանցով որոշվում են ուսումնական պարապմունքները և ճամբարները, ստուգատեսները, ծեսերը և տոները, ստեղծագործական այլ հավաքները:
9. Ուսումնական տարին սկսվում է 2017թ. օգոստոսի 30-ին, կազմված է չորս շրջանից՝
   - առաջին՝ 2017թ. օգոստոսի 30-2018թ. հունվարի 8,
   - երկրորդ՝ հունվարի 9-հունվարի 29,
   - երրորդ՝ հունվարի 30-մայիսի 28,
   - չորրորդ՝ մայիսի 29-հունիսի 15:
10. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Ծնողի համաձայնությամբ շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության պարապմունքներ, հայրենագիտական, ուսումնական ճամփորդություններ, ուսումնական-հասարակական նախագծեր:
11. 2018թ. հունվարի 9-ից 26-ը, մայիսի 29-ից հունիսի 8-ը կրթական ծրագիրը, սահմանված կարգով, կազմակերպվում է նախագծային ուսուցման ճամբարում:

Դասավանդողների բլոգում, դպրոցի ենթակայքում հրապարակվում է նախագծային ուսուցման նախագծերը

12. 2017թ. սեպտեմբերի 4-8-ը, նոյեմբերի 6-10-ը, 2018թ. ապրիլի 2-6-ը, մայիսի 14-18-ը կրթական ծրագիրը կազմակերպվում է նախագծային ուսուցման ստուգատեսով:

Դասավանդողների բլոգում, դպրոցի ենթակայքում հրապարակվում է «Ուսումնական արձակուրդ» նախագծերը:

13. 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը, 2017թ. դեկտեմբերի 25-ից մինչև 2018թ. հունվարի 7-ը, մարտի 26-ից ապրիլի 1-ը, հունիսի 18-ից օգոստոսի 29-ը սովորողին տրվում է արձակուրդ: Այդ շրջաններում ուսուցումը, որպես լրացուցիչ կրթություն, կազմակերպվում է «Ուսումնական արձակուրդ» նախագծով:

Նախագծի արդյունքները հրապարակվում են դպրոցի ենթակայքում, սվորողների բլոգներում:

14. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներ կիրառելով: Սովորողը դպրոց է գալիս սահմանված տեխնիկական պայմաններին բավարարող անհատական նեթբուք-նոթբուք-պլանշետով, տանն ունի համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար համացանցից, համակարգչից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:

Հարավային դպրոցում բոլո սովորողներն ու դասավանդողներն ունեն իրենց անհատական գործիքները՝ բացառությամբ այն սովորողների ովքեր տանը երեք երեխա են, դպրոց են գալիս դրանցով: Համացանցի հետ կապված այս տարի գրեթե խնդիրենր չեն առաջացել:Բոլոր կաբինետներում կա համակարգիչ: Յուրաքնաչյուր ուսուցրի հեռախոս ունի իր նկարահանման և ձայնագրան սարքը և առանձին ֆոտոխցիկի և ձայնագրիչի կարիք չի առաջանում: Դպրոցն ունի իր անհատական ֆոտոխցիկն ու ձայնագրիչը:

15. Մեդիագրադարանը, դպրոցական գրադարանը, դասավանդողի բլոգը սովորողին սահմանված կարգով տանը և դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:

16. Ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պարապմունքների տարբեր ձևերի, ուսումնական նախագծերի մշակման և իրականացման, ուսումնական ճամփորդությունների, ճամբարների, ստուգատեսների միջոցով:

Ուսուցումը կազմակերպվում է տվյալ կետին համապատասխան:

17. Ուսումնական պարապմունքները [սահմանված կարգով](#) կազմակերպվում են հիգիենիկ միջավայրում, այդ թվում՝ բացօթյա:

Դասարանները ժամանակին մաքրելը, օդափոխելը կաբինետի ղեկավարի և կցված դասարանի սովորողների պարտադիր աշխատանքն է: Եղանակի համապատասխանպայմանների դեպքում ուսուցումը կազմակերպու է նաև բացօթյա պարապմունքների միջոցով:

18. Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագիրն իրականացվում է առկա, հեռավար ձևերով:

Այս ուսումնական տարում հեռավար ուսուցումը կազմակեպրող սովորողներ չեն եղել Հարավային դպրոցում:

19. Սովորողի ուսումնական առաջադիմությունը, գործունեության արդյունքները, ճամբարներին, ճամփորդություններին, ստուգատեսներին, ֆլեշմոբներին, նախագծերին մասնակցությունը,

սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ էլեկտրոնային գրանցում են ստանում:

Հարավային դպրոցի էլ. Մատենավարության մեջ գրանցվում էհամապատասխան ցուցանիշները:

20. Սովորողն ուսումնական գործունեության մեջ օգտագործում է համակարգչային տեքստային խմբագիր, ֆոտոխցիկ, ձայնագրիչ, համացանցում որոնողական ծրագիր, մոնտաժային որևէ ծրագիր, էլեկտրոնային բառարաններ, էլեկտրոնային քարտեզ, սովորում է ներկայացում կազմակերպել ու ծրագիր:

Սովորողներն աշխատում են, սովորում թվարկված կետերին համապատասխան:

21. Շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերն իրականացվում են սահմանված կարգով:

Տվյալ օրվա պատասխանատու սովորողներն աշխատում են դպրոցի բակում՝ կատարում պարտիզապուրակային, այգեգործական աշխատանքներ:

22. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական ներքին, արտաքին տարածքների, գույքի խնամքը սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունք են:

23. Անձնական ուսումնական բլոգի (կայքի) սահմանված կարգով վարումը սովորողի և դասավանդողի համար պարտադիր ուսումնական աշխատանք է:

4-5-րդ դասարանի սվորողներն ունեն իրենց անհատական բլոգները: Կազմակերպիչը, դպրոցի ղեկավարը, դասավնդող ուսուցիչները հետևում են սովորողների կողմից դրանց գործածմանը, անհրաժեշտության դեպքում՝ օգնում: Կան հատուկ կարիքով սովորոներ ովքեր ինքնուրույն չեն կարողանում իերնց բլոգը սպասարկել, այդ սովորողների հետ աշխատում է կազմակերպիչը:

24. Դասավանդողի բլոգին, դպրոցի, կրթահամալիրի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը, էլեկտրոնային հասցե ունենալ -վարելը, համացանցային տարածքներից՝ one drive, օգտվելը, ուսումնական բլոգ վարելը սովորողի ուսումնական աշխատանքն է:

:

Սովորողները և ծնողներն ունեն իրենց անհատակ էլ.հասցեն, յուրաքանչյուր օր օգտվում են դրանից, հետևում դպրոցի կայքին, դասավանդող ուսուցիչների բլոգներին:

25. Ծրագրի ամենօրյա 15 րոպե տևողությամբ ընդհանուր պարապմունքը՝ սահմանված կարգով և ծրագրով, սովորողի համար լրացուցիչ կրթական ծրագիր է:

Ամսվա կտրվածքով դասավանդողներին ուղարկում է ընդհանուր պարապմունքի պատասխանատուների ցուցակը: Դասավանդողն իր խմբի սովորողների հետ լինում է տվյալ օրվա ընդհանուր պարապմունքի պատասխանատուն:

26. «Հայրենագիտություն» կազմակերպվում է ուսումնական ճամփորդությունների, բանահավաքչության, ուսումնական այլ նախագծերի ձևով, որպես բաղկացուցիչներ ներառում է նաև «Դիցաբանություն», «Հայոց եկեղեցու պատմություն»:
Ուսուցումն իրականացվում է ուսումնական պլանի համապատասխան:

27. Բնագիտության ուսուցումը կազմակերպվում է բնագիտական, բնապահպանական, բույսերի և կենդանիների խնամքի նախագծերի ձևով, ուսումնական ագարակում, լաբորատոր պայմաններում, փորձի հիման վրա:
Ուսուցումն իրականացվում է ուսումնական պլանի համապատասխան:

28. Երաժշտության ուսուցումը կազմակերպվում է խմբային երգեցողության, պարերգի, պարի, երաժշտության ունկնդրման, համերգների, դասարանական երգչախմբի, ծեսերի և տոների մասնակցության ուսումնական նախագծերի միջոցով:
Ուսուցումն իրականացվում է ուսումնական պլանի համապատասխան:

29. «Տեխնոլոգիա» դասընթացը կազմակերպվում է խոհանոցային, բույսերի և կենդանիների խնամքի, դիզայնի, խեցեգործական, առողջության պահպանության, ծեսերի, տոների, ցուցադրությունների, տոնավաճառների մասնակցության ուսումնական նախագծերի ձևով:
Տեխնոլոգիան սեպտեմբեր-նոյեմբեր ամսիներին կամակերպվել է դիզայնի, խեցեգործական, ծեսերի, տոների, ցուցադրությունների, տոնավաճառների մասնակցության ուսումնական նախագծերի ձևով:

30. 4-րդ դասարանում ֆիզկուլտուրան ներառում է մարմնամարզություն, վազք, հեծանիվ, ծանոթացում տարբեր մարզաձևերի: Լողալ և հեծանիվ վարել կարողանալը 4-րդ դասարանն ավարտողի պարտադիր կարողություններ են: 5-րդ դասարանում ֆիզկուլտուրան սովորողի ընտրած անհատական կամ թիմային մարզաձևի պարապմունքներն են, մրցումները: Սովորողին առաջարկվող մարզաձևեր են նետաձգություն, սուսերամարտ, մարմնամարզություն, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ձեռքի գնդակ: Սովորողը անվտանգ գործունեության հմտություններ գործնական եղանակով ձեռք է բերում բազմամարտի ուսումնական նախագծերի, քայլարշավների, հեծանվային արշավների, բարձունքներ հաղթահարելու, վրանային ճամբարների ժամանակ: Որպես լրացուցիչ կրթություն՝ սովորողը կարող է ընտրել լող, հեծանիվ, սեղանի թենիս, ձիասպորտ:
Պարապմունքները կազմակերպվում են Մայր դպրոցում, Սովորողներին Մայր դպրոց ուղեկցում է կազմակերպիչ՝ Համիկ Պողոսյանը, ուսուցչհօգնական՝ Արևիկ Բալջյանը: Սովորողները Հարավային դպրոց վերադառնում են ոտքով: Սովորողների խմբերը համապատասխանում են ցուցանիշներին:

31. Տնային ուսումնական աշխատանքը սովորողի և ծնողի համաձայնեցված ընտրությամբ լրացուցիչ աշխատանք է, ամենամսյա ֆլեշմոբներ:

Այս կետն արտացոլված է սովորողի անհատական ուսումնական պլանում: Սովորողը ինքնակրթության միջոցով իր ցանկությամբ երկարացված օրվա ճամբարում ևս կարող է ինքնուրույն կատարել տվյալ աշխատանքները:

32. Սովորողն իր ընտրությամբ շաբաթական 4 ժամ իրականացնում է մեդիալրագրողի, մաթեմատիկոսի, հայրենագետի, մարզիկի, բուսաբան-կենդանաբանի, պարտիզպանի, դիզայների, թատերական գործունեություն, բնագիտական-տեխնիկական ստեղծագործություն, կինո-ֆոտոգործ, երաժշտություն (սոլֆեջիո, երաժշտական կոմպոզիցիա):

Հարավային դպրոցի 4-5–րդ դասարանում գործում են հետևյալ ընտրությամբ գործունեության խմբերը.

- Բնագիտական-տեխնիկական ստեղծագործություն
- Կինո-ֆոտո
- Մաթեմատիկոսի
- Մեդիալրագրողի
- Բուսաբան-կենդանաբանի

33. Լրացուցիչ կրթությունը կազմակերպվում է կրթահամալիրի դպրոցներում, ուսումնական կենտրոններում՝ սովորողի ծնողի հետ կնքվող լրացուցիչ կրթության պայմանագրով, որպես ուսումնառության պայմանագրի հավելված, սահմանված կարգով: Սովորողը կարող է լրացուցիչ ուսուցման դասընթաց ստանալ նաև կրթահամալիրից դուրս:

Սովորողներիլրացուցիչ կրթության պարապմունքները արտացոլված են իր անհատական ուսումնական պլանում:

34. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների, ընտրությամբ գործունեության, ուսումնական նախագծերի բաղկացուցիչն են:

35. Տնական շրջանի Հայաստանից բացակայած, տարբեր պատճառներով ուսումնական ծրագիրը չյուրացրած սովորողի համար կրթական ծրագիրը սահմանված կարգով կարող է կազմակերպվել անհատական ծրագրերով:

Հարավային դպրոցում նման սովորողներ չունենք:

36. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի դեկավարի, դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներում և սահմանված կարգով ներկայացվող էլեկտրոնային հաշվետվություններում:

37. Գնահատումը կատարվում է ըստ ուսումնական շրջանների՝ սովորողի ուսումնական գործունեության հրապարակված արդյունքներով (ուսումնական բլոգ, ցուցադրություն, համերգ, ֆլեշմոբերի, ծեսերի-տոների, ստուգատեսների, ճամբարների, ճամփորդությունների մասնակցություն): Գնահատումը 10 միավորանոց համակարգով է:

Գնահատումը կատարվում է կարգի համաձայն:

38. Չորրորդ դասարանի վերջում, սահմանված կարգով, անցկացվում են ուսումնական աշխատանքի արդյունքների ուսումնասիրություններ: